ՀԵՏԱՔՐՔՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
**Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կարողությունների զարգացման ծրագրի**
ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԴՐԱՄԱՇՆՈՐՀ # TF011907

Հայաստանի Հանրապետությունը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կարողությունների զարգացման ծրագրի իրականացման նպատակով ՀԲ-ից ստացել է $ 317.000.00 ֆինասավորում եւ մտադիր է այդ միջոցների մի մասն օգտագործել «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի համար իրավական և կանոնակարգային միջավայրի բարելավում» խորհրդատվական ծառայությունների մատուցման դիմաց:

Առաջադրանքի իրականացման հիմնական նպատակն է ՀՀ խաղային գործի բնագավառում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում իրավական, կանոնակարգային և ինստիտուցիոնալ դաշտ ձևավորել և դրանք համապատասխանեցնել միջազգային ստանդարտներին: Այս ոլորտը շատ ռիսկային է ՓԼ/ԱՖ առումով և ոլորտում գրացված ռիսկերի համապատասխան վերահսկման և մեղմելու իմաստով լուրջ մարտահիրավերներ կան (թե ï í Û³ É· áñÍ áõÝ»áõÃÛ³ Ý ÉÇó»Ý½ í áñÙ³ Ý · áñÍ ÁÝÃ³ óáõÙ, թե´ ÉÇó»Ý½ í áñáõÙÇó Ñ»ï á áÉáñï Ç í »ñ³ ÑëÏ áÕáõÃÛ³ Ý ï »ë³ ÝÏ ÛáõÝÇó). ³ éÏ ³ »Ý խոչընդոտներ խաղային գործի կազմակերպիչների մոտ փաստաթղթային (off-site) և տեղում (on-site) ստուգումներ իրականացնելու համար: Օրենսդրական դաշտի և գործիքակազմի կատարելագործման շնորհիվ նախատեսվում է խաղային գործի բնագավառում առկա ռիսկերը դարձնել տեսանելի և կառավարելի:
Խորհրդատվական ծառայությունների մատուցման տևողությունը կլինի 7 ամիս՝ պայմանագրի ստորագրման և ուժի մեջ մտնելու պահից: Ծառայությունների մատուցումը նախատեսվում է սկսել 2014 թվականի մարտից:

Խորհրդատվական ընկերությունը պետք է ունենա հետևյալ որակավորումը.
ՀՀ տնտեսության ճյուղային առանձնահատկությունների պատկերացում վ
Խորհրդատուն պետք է ունենա առնվազն 5 տարվա հաջողված փորձ խորհրդատվության և վերապատրաստման ծառայությունների իմաստով:
Խորհրդատուի հիմնական աշխատակազմը, որն ընդգրկված կլինի տվյալ հանձնարարականի իրականացման գործում, պետք է ունենա (i) խաղային գործի ոլորտում առնվազն 5 տարվա հաջող խորհրդատվության տրամադրման, խաղային գործի վերահսկողության և կարգավորման փորձ, (ii) խաղային գործի բնագավառի բարեփոխման (նախընտրելի է ինչպես զարգացած, այնպես էլ անցումային երկրներում) զգալի փորձ, (iii) ՓԼ/ԱՖ դեմ պայքարի շրջանակներում խաղային ոլորտում իրականացվող վերահսկողության և կարգավորման վերաբերյալ միջազգային փորձի իմացություն, մասնավորապես ՓԼ/ԱՖ օրակարգի շրջանակներում՝ FATF-ի և միջազգային լավագույն այլ պրակտիկայի և առաջարկների համաձայն, (iv) այս ոլորտում անցումային տնտեսությունների փորձի և պրակտիկայի, ինչպես նաև իրավական և կանոնակարգային դաշտի և ինստիտուցիոնալ միջոցառումների իմացություն: Խորհրդատուի աշխատանքային հարաբերությունները և փորձագետների գիտելիքները այն երկրներում, որոնք համապատասխան փորձ ունեն, կդիտարկվի որպես առավելություն՝ ուսումնական այցերի կազմակերպման և ՀՀ-ում գիտելիքների փոխանակման համար:

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» ՊՀ համապատասխան որակավորում ունեցող խորհրդատուներին հրավիրում է հանդես գալ իրենց հետաքրքրվածության հայտերով: Հետաքրքրված խորհրդատուները պետք է տեղեկություններ ներկայացնեն՝ ցույց տալով, որ իրենք ծառայությունները մատուցելու համար համապատասխան որակավորում ունեն (բրոշյուրներ, նմանատիպ առաջադրանքների իրականացման նկարագրություն, համանման պայմաններում աշխատելու փորձ, աշխատակիցների շրջանում համապատասխան հմտությունների առկայություն եւ այլն): Խորհրդատուները կարող են համագործակցել միմյանց հետ՝ իրենց որակավորումը կատարելագործելու համար:
Խորհրդատուի ընտրությունը կիրականացվի համաձայն 2011թ. հունվարին տպագրված ՀԲ Ուղեցույցների՝ ՀԲ վարկառուների կողմից խորհրդատուների ընտրություն եւ վարձում, շրջանակներում սահմանված Բաժին III-ում ներկայացված «Խորհրդատուի որակավորում ընտրության» մեթոդով ընթացակարգերի համաձայն:
Հետաքրքրված խորհրդատուները հավելյալ տեղեկատվություն ստանալու նպատակով կարող են դիմել ստորեւ ներկայացվող հասցեով տեղական ժամանակով 09:00-ից 18:00 ընկած ժամանակահատվածում (GMT+4):

Հետաքրքրվածության հայտերը պետք է ներկայացվեն ստորեւ ներկայացվող հասցեով մինչեւ 2014թ. փետրվարի 19-ը (ներառյալ) մինչեւ 18:00 (GMT+4):

Հետաքրքրվածության հայտերը կարող են ներկայացվել էլեկտրոնային փոստով:

ՀՀ ֆինանսների նախարարության
«Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» ՊՀ
Գործադիր տնօրեն
պրն. Էդգար Ավետյանին
Հասցե՝ Կառավարության տուն 1,
3 հարկ, 344 սենյակ,
Հանրապետության հրապարակ,
Երեւան, ՀՀ
Հեռ՝ (374-10) 52 34 71, 595-344
Ֆաքս՝ (374-10) 545 708
Էլ-փոստ՝ info@ffpmc.am